

ԿԱՆՈՒԽ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Շնորհակալութի ՚ն կը յայտնենք քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը, որ հանգիստ եւ խաղաղ քուն մը պարգեւեցիր մեզի, եւ արթնցնելով՝ կարելիութիւնը տուիր, որ առաւօտ կանուխ երկրպագենք քու ահաւոր ու փառաւոր եւ սուրբ անունիդ: Կ'աղաչենք քեզի, Տէ՛ր, թոյլ տուր որ խաղաղութեամբ անցընենք մնացեալ օրը, եւ մեր պանդուխտի ամբողջ կեանքին ընթացքին մեզ քու երկիւղովդ ամրացուր եւ պահպանէ, որպէսզի այս աշխարհի մէջ փորձութիւններէ հեռու եւ անարատ կեանքով մը ապրելէ ետք, յաւիտեանական կեանքիդ անխռով եւ խաղաղ նաւահանգիստը հասնինք՝ մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն ու մարդասիրութեամբը: Անոր հետ քեզի՝ Հօրդ եւ Սուրբ Հոգիին կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԺԱՄԱԳԻՐՔ